ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային արժեքային համակարգի ձեւավորումը
Հայոց պատմության դասերին
Առարկա՝ Հայոց եւ համաշխարհային պատմություն
Հեղինակ՝ Աստղիկ Ղազարյան
Մարզ՝ Երեւան
Ուսումնական հաստատություն՝ հ. 174 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Բաժին I	
Արժեհամակարգի ձեւավորումը դպրոցում եւ նրա վրա ազդող գործոնները	4
Բաժին II	
Արժեհամակարգի ձեւավորումը հայոց պատմության դասերին	8
Եզրակացություն	14
Առաջարկություններ	15
Օգտագործված գրականության ցանկ	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը: Ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց ազգային կրթության, մշակույթի եւ գիտության համակարգերի փոխգործունեության միջոցով ու կրթության ֆոնի վրա, որի ողնաշարն ու առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգեւոր, իմացական, մշակութային եւ էթնիկականարժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձեւավորման եւ զարգացման համար: Արժեհամակարգը լիակատար է եւ համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:

Արժեհամակարգի ձեւավորման եւ նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարեւոր եւ անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, արժեքների ձեւավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է հայոց պատմության դերը: Այն մեծ հնարավորություն ունի ձեւավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, որի միջոցով կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի, մարդկային քաղաքակրթության ստեղծման ու զարգացման գործում մեծ ավանդի մասին, ձեւավորում է արժեհամակարգ, որի մեջ կուտակված է անցյալի փորձը եւ դրա յուրացումը աշակերտների մեջ ձեւավորում է ազգայնական աշխարհայացք եւ ապահովում է ազգի միասնությունը, որը նախատեսում է յուրաքանչյուր անհատի պատասխանատվություն պետության ճակատագրի համար եւ կարեւորագույն գործոն է պետության վերընթացի գործում:

Գլուխ 1

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական եւ այլն: Կրելով վերոնշյալ եւ այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին եւ ձեւավորվում իբրեւ ստեղծագործական անհատականություն: Այս տեսանկյունից դիտարկելիս կարեւոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձեւավորումը, որի շնորհիվ արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են եւ հետեւաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից եւ օրենքներից: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսեւորումներ եւ հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ եւ հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ եւ հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) եւ տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաեւ որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսեւորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում[1]: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական եւ անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձեւերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը եւ այլն:

Աշակերտի արժեքների ձեւավորման վրա ազդող գործոններից են նաեւ ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի եւ հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձեւավորումը ընտանիքի եւ սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին եւ խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «...Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետեւից»:

Աշակերտի արժեքների ձեւավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսեւորվում են՝ ըստ տարիքային եւ կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսեւորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձեւում, ապրելակերպում եւ այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարեւորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձեւավորումն է»: Սովորողի անձի արժեքների ձեւավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երեւելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ եւ այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաեւ աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը եւ այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաեւ բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձեւավորվելու ավելի արագ եւ անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:

Հետեւաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն եւ ըստ հարկի՝ նաեւ միջամտություն: Աշակերտի արժեքների ձեւավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաեւ ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետեւ աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարեւոր դեր է կատարում նրանց անձի ձեւավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետեւ ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները եւ հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական եւ այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին կարեւորվում են նաեւ ուսուցման մեթոդները, որոնք ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի, նպաստում են ընդունակությունները եւ ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակների առաջացմանը, սովորողների գիտական աշխարհայացքի ձեւավորմանը, արժեհամակարգի համակողմանի եւ ներդաշնակ զարգացմանը:[2]

Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի հայրենասեր եւ պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարեւորի ազգային-պետական մտածողության եւ գործելակերպ ունենալը եւ դրսեւորի դրան հասնելու ձգտում ու կամք: Ունենա ազգային ինքնագիտակցություն: Կարեւորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: Ունենա արդարության, լավատեսության եւ պատասխանատվության զգացում, գիտակցի ներկան եւ ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը: Գիտակցի իր ժողովրդի նյութական եւ հոգեւոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը, որ կյանքում իր համար առավել կարեւոր արժեքներից են լինելու գիտելիքը, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը եւ այլն:[3]

Աշակերտի արժեհամակարգը պետք է ձեւավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին եւ պատմությանը՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձեւավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ պատմության տեսանկյունից, այն է՝ ժողովրդավարական եւ քաղաքացիական կարողունակություն.

1. Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության եւ իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը:

2. Նրանք ճանաչողության միջոցով ձեւավորում են սեր հայրենիքի նկատմամբ,

3. Գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային եւ համաշխարհային մակարդակներում:

4. Սովորողներն արժեւորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարեւորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք:

5. Նրանք ճանաչում են հասարակական կյանքի մշակութային, պետաիրավական եւ տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն եւ հետեւանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:[4]

Հատկանշական է, որ քաղաքացիական հասարակության առաջացումը կապվում է հասարակության զարգացման այն աստիճանի հետ, երբ ձեւավորվում է որոշակի իրավունքներ ունեցող, իրեն որպես անհատ գիտակցող եւ իր արարքների համար պատասխան տալու ընդունակություն ունեցող ինքնուրույն քաղաքացին:

Գլուխ 2

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

«Հայոց պատմություն» առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, որոնց օգնությամբ ձեւավորվում է ազատ, գիտակից հայ մարդ եւ քաղաքացի, լուծվում են կրթադաստիարակչական եւ զարգացման մի շարք կարեւոր խնդիրներ:

«Հայոց պատմություն» առարկայի ուսուցումը սովորողներին դաստիարակում է հայրենասիրական ոգով, որն ազգային գաղափարախոսության հիմնախնդիրներից է: Առանց պատմական հիշողության միջոցով դարերով փոխանցված գերագույն արժեքի՝ հայրենասիրության, չենք կարող ունենալ հայրենիք, որը ժողովրդի բոլոր սերունդների դարավոր հերոսական պայքարի արդյունք է: Ազատ ու անկախ հայրենիքում են ձեւավորվում ազգային բնավորության գծերը, ազգային նկարագիրը, ավանդույթները, մշակույթը, կրոնը, բարքերը, լեզվական առանձնահատկություններն ու ազգային ինքնագիտակցությունը, երբ «հող» եւ «տուն» հասկացությունները մտնում են ցեղի արյան ու գենի մեջ՝ որպես գոյատեւման հիմնական պայման: Ազգային գաղափարախոսության համակարգում կարեւորվում է նաեւ ազգային մշակույթի եւ կրոնի դերը, որոնց միջոցով ձեւավորվում է համամարդկային արժեքներ՝ պահպանելով ազգային նկարագիրն ու կրոնագաղափարական հիմնադրույթները:

Ծանոթանալով պատմական հիշողությունների ամբողջական պատկերին, անդրադարձ կատարելով ազգային գաղափարախոսություններին պատմության ուսուցմամբ, ակնառու է դառնում արժեհամակարգի ձեւավորման տեսակները.

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր եւ նորագույն ժամանակներն ընդգրկող ամբողջական գիտելիքով, կարեւորվեն ազատության, անկախության, պետականության ստեղծման եւ ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը ցուցաբերելու գաղափարը եւ դրանց վերաբերող փաստերը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր եւ համակողմանի իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց եւ կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:[5] Այդ գաղափարի հավաստիքն է՝ անցյալից եկող դասերին, դրանց իմացությամբ եղած մարտահրավերներին պատասխան տալուն պատրաստ լինելու հրամայականով ոգեշնչված «Խուստուփի արծիվ» Գարեգին Նժդեհի հետեւյալ խոսքը. «Հայրենասիրութիւն - մարդկային առաքինութիւնների թագն ու պսակն է դա: Մարդկային բարոյական յատկութիւնները իր մէջ միացնող այդ գերագոյն առաքինութիւնն է ազգերի գոյութեան անհրաժեշտ պայմանը եւ անսպառ աղբիւրը նրանց ոյժի եւ մեծութեան... Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, ընկնում՝ նրանց պակասի պատճառով»:[6]

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների եւ համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, ժողովրդի հանճարով ստեղծված պատմամշակութային կոթողներին կվեհացնի սովորողների ոգին, սեր կառաջացնի գեղեցիկի նկատմամբ, կսովորեցնի կապվել նախնիների ստեղծագործական ավանդներին:[5] Կարող ենք հիշատակել «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ», «Արտաշես եւ Սաթենիկ» վիպերգերը, որտեղ պատմական փաստերի միջոցով ներկայացվում է ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերի, հասարակության եւ պետության զարգացման, ինչպես նաեւ նշանավոր մարդկանց կյանքին ու գործունեությանն առնչվող դրվագներ, առարկաներ, ընտանեկան պատմություններ եւ մասունքներ, որոնք օրինակ են դառնում աճող սերնդի կյանքի կառուցման գործում:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ եւ ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը, վեր հանել շինարարական տաղանդի ու արարումների լավագույն դրսեւորումները: Ներարկել սեր եւ հարգանք աշխատանքի, աշխատավոր եւ բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ: Դաստիարակել մարդկային-բարոյական դրական որակներով ու արժանիքներով մարդ՝ բարի, ազնիվ, մաքուր, անկեղծություն, համբերատար, հանդուրժող եւ համագործակցող:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են կառուցել, ընտանիք կազմել, սնվել ու հագնվել, ուրախացել ու տխրել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին: Ազգային կենարար ակունքներից սնվելը կօգնի նրանց ավելի ուժեղ եւ ամուր կանգնել հայրենի հողի վրա, զգալ հայրենիքի ուժն ու զորությունը: Անդրադարձ կատարել պատմական անցյալին՝ ներշնչվելով, որ եկել է ժամանակը ետ բերելու Տիգրան Մեծի ստեղծած «Ծովից ծով Հայաստանը»:

6. Բացահայտել պատմամշակույթային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Տալ նրանց համակողմանի բնութագիրը եւ նկարագիրը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալը:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից, կարծիքների եւ տեսակետների, մտքերի ու գաղափարների բախումից: Օրինակ՝ ՀՀ երեք հանրապետությունները, որոնց տարածքային խնդիրներին ու անցյալի իրադարձություններին ծանոթանալով, անհարժեշտ է դասեր քաղել եւ կերտել հզոր ապագա:

8. Դաստիրակել ջերմ հայրենասիրություն, ձեւավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է: Դաստիարակել հայրենիքին անձնազոհ նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն:[5] Այդպիսի վառ կերպար է մեր պատմության ամենաթանկագին գոհարներից մեկը, հերոս Անդրանիկ Օզանյանը, ով հայրենիքը սեփական անձից վեր է դասում. «Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի եւ պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության եւ բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը եւ ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում»:[7]

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական եւ պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել

հայ ժողովուրդը: Ցույց տալ հայ ժողովրդի տեղն ու խաղացած դերը քաղաքակիրթ աշխարհում:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման եւ վերածնության գործին՝ հետեւելով հայ բանաստեղծ Վահագն Դավթյանի իմաստության խոսքին.

«Ու երբ եկել են, որ խլեն ինձնից լեռնաշխարհն այս լուրթ,
Խոցվել եմ հաճախ ես ոսոխների նետ ու նիզակից,
Արյունս կաթ-կաթ ծծվել է հողում, եւ այս հողը սուրբ.
Դարձել է այդպես ինձ արյունակից...
Ու երբ նորից է բարբառել հեռվից ձայնն այդ հմայող,
Ու երբ նորից է խոստացել չքնաղ ու կանաչ ափեր,
Ասել եմ նրան.-
Չկա այսպիսի հայրենիք ու հող,
Քանզի այստեղ եմ արյունս թափել:
Այս հողին եմ ես դարեդար խառնել արցունք ու կարոտ,
Խառնել տառապանք, հրաշք եմ խառնել ու խառնել ոգի,
Որ երբե՛ք, երբե՛ք չթողնեմ կյանքում երկիրն այս քարոտ
Ու երբեք, երբեք չտամ ոչ ոքի....»[8]:

11. Նպաստել մարդասիրության եւ սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի եւ քաղաքացու ձեւավորմանը:

12. Ձեւավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության եւ մարդու իրավունքների ինչպես նաեւ համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձեւավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի եւ ապագայի նկատմամբ: Առաջ բերել մարդկության առջեւ ծառացած հիմնահարցերի լուծման գործում իր ավանդն ունենալու ձգտում եւ ցանկություն: Հաշվի առնելով 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի նյութական եւ մարդկային կորուստները, պետք է հայ ժողովրդի

գոյապահպանման համազգային ծրագրի բաղկացուցիչ մաս դարձնել կորուստների վերականգնումը:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական ընդունակությունները, տրամաբանական, ստողծագործական մտածողությունը, համագործակցային, հաղորդակցական եւ ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները, խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու եւ հարստացնելու կարողությունը, մշակել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու եւ դրանք մշակելու հմտություններ, ձեւավորել պատմական դեպքերը, երեւույթները համեմատելու, վերլուծելու, վերացարկելու, ընդհանրացնելու եւ կանխատեսումներ կատարելու, գնահատելու ունակություն, զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները եւ տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երեւույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ, զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր եւ հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) եւ մտավոր գործողությունները (համեմատում, համադրում եւ այլն):[5]

Տեսական եւ փաստական տվյալների կուտակմամբ եւ պատմական դարաշրջանների վերլուծությամբ սովորողների համար բացահայտում ենք արժեհամակարգերի ձեւավորման առանձնահատկությունները:

Ուսուցման կազմակերպման տարբեր ձեւերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ եւ այլն) առավել արդյունավետ է դառնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց եւ այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիա-

ռակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձեւավորվում են համառության, ինքնակազմակերպման եւ ինքնավերահսկման ընդունակություններ:

«Հայոց պատմություն» առարկայի ուսուցման ժամանակ ձեւավորված արժեհամակարգը հնարավորություն է տալիս սերունդներին հոգատար վերաբերմունք ցուցաբերել ազգի գոյապահպանմանը, ազգային գաղափարախոսության զարգացման խնդիրների լուծմանն ու աշխարհընկալմանը, որոնք պետական քաղաքականության արժեքներից են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մտածողության շրջանակներում առկա բազմաթիվ տեսական եւ գործնական հայեցակարգերի վերլուծության, համադրման եւ սինթեզի արդյունքում կարող ենք փաստել, որ հայոց պատմության դասերին կրթության արդյունավետությունը պայմանավորված է ուսուցման եւ դաստիարակության արժեհամակարգի ձեւավորմամբ: 21-րդ դարի սովորողին արդյունավետ կրթելը միտված է նրա մտավոր եւ հոգեբանական կառուցվածքի յուրահատկությունների զարգացմանն ու արժեհամակարգի կողմնորոշմանը:

Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարեւոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաեւ նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով դրսեւորում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլեւ բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային եւ ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքի եւ կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսեւորումների միաժամանակյա եւ փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի եւ թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձեւավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է եւ մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց պատմության դասին ներկայացվող կարեւորագույն պահանջ եւ յուրաքանչյուր դասի համար բնորոշ հատկանիշ պետք է լինի չափորոշչահեն ուսուցումը:

Պատմություն առարկայի որակի եւ արդյունավետության բարձրացման եւ սովորողների մոտ արժեհամակարգի ձեւավորման նպատակով ՝ կախված դասի թեմայից, նպատակներից ու խնդիրներից, դասարանի տարիքային առանձնահատկություններից, առկա հնարավորություններից եւ այլ հանգամանքներից, պետք է օգտագործենք ուսուցման հետեւյալ մեթոդները եւ հաղորդակցման ձեւերը.

1. Այցելություններ մշակութային կենտրոններ (թանգարաններ, հուշահամալիրներ...) համապատասխան դասի թեմաներին զուգահեռ՝ որպես գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ամփոփիչ դաս.

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր

Մայր Հայաստան հուշահամալիր

Հայաստանի պատմության թանգարան

Ծիծեռնակաբերդի հուշահամալիր

«Մեգերյանկարպետ» ձեռագործ գորգերի գործարան

Մատենադարան եւ այլն:

2. Քաղաքային թեմատիկ տուրեր (Հայկ Նահապետի, Սասունցի Դավթի, վիշապաքաղ Վահագնի, Տորք Անգեղի, Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի արձաններ եւ այլն):

3. Այցելություններ վանական համալիրներ՝ հաղորդակից դարձնելու միջոցով նպաստելով աճող սերնդի ազգային-հոգեւոր արժեքների ամբողջացմանն ու ամրապնդմանը (Սուրբ Էջմիածին Մայր տաճար, Զվարթնոց, Սանահին, Հաղպատ եւ այլն):

4. Հայրենասիրական բնույթի արտադասարանական միջոցառումների կազմակերպում:

5. Տեսասահիկների պատրաստում ՝ որպես հետազոտական աշխատանք՝ ամփոփիչ եզրակացությամբ (պատմական շրջադարձային իրադարձությունների վերաբերյալ):

6. Փաստավավերագրական ֆիլմերի դիտում՝ պատմական իրադարձությունների վերաբերյալ:

7. Հանդիպումների հաճախակի կազմակերպում ժամանակակից հերոսների հետ՝ նրանց սխրագործություններին ծանոթանալու նպատակով, որը կնպաստի հայրենասիրական արժեքների ամրապնդմանը եւ հայրենանվեր գործունեության ծավալմանը:
8. Քննարկումների (բանավեճեր) կազմակերպում, ինչպես միջառարկայական կապերի, այնպես էլ արդի ժամանակաշրջանի խնդիրների լուծման վերաբերյալ՝ օգտագործելով հետեւյալ մեթոդները՝ բացատրական-ցուցադրական, ինֆորմացիոն-ռեցեպտիվ, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանք, մասնակի որոնողական եւ հետազոտական:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես, N1, Երեւան, 2014 թ:
2. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երեւան, 1977 թ.:
3. Ա. Սարգսյան, Ա. Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում:
4. Հանրակրթական պետական չափորոշիչ, Երեւան 2021 թ.:
5. Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան, Հայոց պատմությունը, 6-7դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, Երեւան, 2013 թ:
6. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երեւան, 2006 թ.:
7. Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիւը, Երեւան, 2012 թ.:
8. Վահագն Դավթյան, Լույս առավոտի, բանաստեղծություններ, Երեւան, 1984 թ.: